Տեղեկանք

2025թ. մայիսի 1-ից մինչև 2026թ. ապրիլի 30-ը ներառող հաշվարկային տարվա արդյունքով ավելցուկային էլեկտրական էներգիայի առկայության դեպքում ինքնավար էներգաարտադրողներին հատուցման ենթակա էլեկտրական էներգիայի միավորի գնի վերաբերյալ

«Էներգետիկայի մասին» օրենքի 56.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***ինքնավար էներգաարտադրության շրջանակում հաշվարկային տարի է համարվում յուրաքանչյուր օրացուցային տարվա մայիսի 1-ից մինչև հաջորդող օրացուցային տարվա ապրիլի 30-ը ներառյալ ժամանակահատվածը,*** իսկ հաշվարկային տարվա վերջին (ապրիլ) ամսվա արդյունքներով առաջացած (ներառյալ՝ նախորդող ամիսներից կուտակված) դրական տարբերության համար երաշխավորված մատակարարը («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ) ինքնավար էներգաարտադրողին վճարում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների կողմից հաշվեկշռման շուկայում անհաշվեկշռույթների արդյունքով առաջացած էլեկտրական էներգիայի վաճառքի տարեկան նվազագույն գնով:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ 2025թ. մայիսի 1-ից մինչև 2026թ. ապրիլի 30-ը ներառող ժամանակահատվածին վերաբերող, **հաշվեկշռման շուկայում անհաշվեկշռույթների արդյունքով առաջացած էլեկտրական էներգիայի վաճառքի տարեկան նվազագույն գնի մասով** ընդունել է հետևյալ 2 որոշումները.

1) Հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N447-Ա որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական շուկայում հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն սակագինը՝
   ա. **մարտ, ապրիլ, մայիս, հունիս, սեպտեմբեր, հոկտեմբեր** ամիսների համար սահմանվել է **10.974 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.**

բ. **հունվար, փետրվար, հուլիս, օգոստոս, նոյեմբեր, դեկտեմբեր** ամիսների համար սահմանվել է **13.717 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:**

Այս որոշումը գործել է 2025թ. փետրվարի 1-ից մինչև 2026թ. հունվարի 31-ը ներառյալ:

Հետևաբար, այս որոշման գործողությունը՝ ***ինքնավար էներգաարտադրության շրջանակում 2025թ. մայիսի 1-ից մինչև 2026թ. ապրիլի 30-ը ներառող հաշվարկային տարվա տեսանկյունից, տարածվում է 2025թ. մայիսի 1-ից մինչև 2026թ. հունվարի 31-ը ներառյալ ժամանակահատվածի վրա:***

2) Հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի N463-Ա որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական շուկայում հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն սակագինը՝

ա. **մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր** ամիսների համար սահմանվել է **11.706 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.**

բ. **հունվար, փետրվար, նոյեմբեր, դեկտեմբեր** ամիսների համար սահմանվել է **14.633 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի**:

Այս որոշումը գործում է 2026թ. փետրվարի 1-ից և առ այսօր ուժի մեջ է:

Հետևաբար, այս որոշման գործողությունը՝ ***ինքնավար էներգաարտադրության շրջանակում 2025թ. մայիսի 1-ից մինչև 2026թ. ապրիլի 30-ը ներառող հաշվարկային տարվա տեսանկյունից, տարածվում է 2026թ. փետրվարի 1-ից մինչև 2026թ. ապրիլի 30-ը ներառյալ ժամանակահատվածի վրա:***

Հետևաբար, ինքնավար էներգաարտադրության շրջանակում 2025թ. մայիսի 1-ից մինչև 2026թ. ապրիլի 30-ը ներառող հաշվարկային տարվա վերջին՝ 2026թ. ապրիլ (ներառյալ նախորդող ամիսներից կուտակված) ամսվա արդյունքով ինքնավար էներգաարտադրողների մոտ էլեկտրական էներգիայի ավելցուկային էլեկտրական էներգիայի առկայության դեպքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն ինքնավար էներգաարդրողներին պետք է հատուցի ***10.974 դրամ/կՎտժ՝ (առանց ավելացված արժեքի հարկի) գնով,*** քանի որ այն հանդիսանում է Հանձնաժողովի կողմից սահմանված և 2025թ. մայիսի 1-ից մինչև 2026թ. ապրիլի 30-ը ներառյալ ժամանակահատվածին վերաբերելի՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական շուկայում հաշվեկշռման ծառայության մատուցման նվազագույն սակագներից (10.974 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ, 11.706 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ, 13.717 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ և 14.633 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ) **նվազագույնը**:

Եթե ինքնավար էներգաարտադրող հանդիսացող սպառողն իրեն մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին վճարում է ավելացված արժեքի հարկը ներառող սակագնով, ապա ավելցուկային էլեկտրական էներգիայի առկայության դեպքում՝ դրա յուրաքանչյուր միավորի (կՎտժ) դիմաց հատուցումը ևս «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից կստանա ավելացված արժեքի հարկը ներառող գնով, որը կկազմի ***13.1688 (10.974 * 1.2) դրամ/կՎտժ:***